


# ԱՌՐԲԵՋԱՆ ՍԱՍՏԿԱՑՈՒՑ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՌՄԲԱԿՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԿ. ՈՒԺԵՐԸ ԿԸ ԴԻՄԱԴՐԵՆ, ԲԱՅՑ ՆԱԵՒ ԿԸ ՆԱՀԱՆՁԵՆ ՈՒ ԶՈՀԵՐ ԿՈՒ ՏԱՆ



Ե Ր Ե Ւ Ա Ն  
(«ԱՐՄԷՆՓՐԷՍ» - ՍԵՊՏԵՄԲԵՐ 20/26)

### ՀԱՅՐԵՆԱՆՈՒԻՐՈՒՄ ԹԷ ԻՆՔՆԱՆՈՒԻՐՈՒՄ

Սեպ. 19-ին, հեռառեսիլի «Լրարեր» յայտարարով յայտարարուած է որ ժողով Վահրամ Հաճեանի իրերուն մէջ Երեւանի օդակայանը յայտնարեւուած են Այվազովսկիի երեք, իսկ Չարուբինի մէկ պատասաններ, սրբապատկեր մը, երկու հնատիպ ֆրանսերէն գիրք, հինգ դրամ, մէկ ալեքսանդրիա քար: Հարցին մասին հետաքննութիւն բացուած է:

«Արմէնիքէս» նկատի առած որ ենթական որպէս «հայրենանուէր դործիչ» ծանօթ է Հայաստանի մէջ ու բազմաթիւ բարեսիրական արարքներու կարգին իր երկու հաւաքածոներու պատուազինը նըւիրած է աղէտի դօտիին, դիմած է իրեն, լուրը պարզելու: Վ. Հաճեան բացատրած է թէ նշուած արժէքները ոչ թէ Հայաստանէն դուրս տարած է, այլ Հայաստան բերած արտասահմանէն...: Ան ըսած է նաեւ թէ վճռական կերպով բողոքած է օդակայանի մաքսատան նման դործողութիւններուն եւ «Լրարեր»ին վարկարեկիչ յայտարարութեան դէմ:

### ՀԱՌՐՈՒԹԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ՍԻՍԻԱՆԻ ՄԷՁ

Սիսիանի հացամթերումի ձեռնարկութեան մէջ բացուած է ԼՂՀ-ի Հազրութի ընկերութեան խանութը, ուր կը վաճառուի կամ կը փոխանակուի Ղարարազի մրգաւէտ այգի շրջանի բերքերը: Իսկ վաճառքէն գոյացած գումարով Սիսիանէն Հազրութ կը զրկեն հացահատիկ, պարէնամթերք եւ անհրաժեշտ այլ ապրանքներ:

կը եւ գետեղուած ցաւակցութեան տուամար մը, ուր ստորագրեց նաեւ «Յառաջ»: Թաղման ներկայ եղան ընկերվարական Միջազգայինի ներկայացուցիչները եւ Պերնար Քուչնէր որ ուղերձ մը կարգացած է Տիկլին Միթերանէ:

ՏԱՃԻԿՍՏԱՆԻ մէջ կացութիւնը միշտ չփոթ է եւ ընդհանրացած քաղաքացիական պատերազմի մը վախը օրէ օր կ'ամբարպնդուի: 5 միլիոն բնակչութիւն ունեցող այս ազգատ Հանրապետութեան Աֆղանիստանի հետ դրացնութիւնն ալ շատ վտանգաւոր կը նկատուի (գէնքի եւ թըմրեցուցիչի առատ ներածումի պատճառով): Համայնավարները որոնք վաւերուած են իշխանութենէն բացէ ի բաց պատերազմ կը մղեն նախկին ընդդիմութեան դէմ, որ այսօր իշխանութեան գլուխն է: Ռուսաստանի Պաշտպանութեան նախարարութիւնը սրտած է զօրացնել հոն զբանուող իր 201-րդ զօրաբաժինը պաշտպանելու համար ռուսական կառոյցները: Իշխանութեան գլուխ եղողները կ'ուրանան թէ իսլամական վարչակարգ մը կ'ուղեն հաստատել, ամէն պարագայի մէջ, ոչ 60-80 տարիէն առաջ:

ՆԱԽՍ.ԳԱՀ ՄԻԹԵՐԱՆ, որ իր կնոջ եւ եղբորը հետ քանի մը օր հանգստացաւ Պէլլի, Երեքշարթի կէսօրէ յետոյ վերադարձաւ Փարիզ, ուր յաջորդ օրն ալ կը նախագահէր Նախարարաց Խորհուրդին:

ՊԵՏՐՈՍԵԱՆ (ձկնկիթ - քալիստ) ծախու չէ, կը վստահեցնէ Արմէն Պետրոսեան (Ֆիկառօ, Սեպ. 29), հերքելով նոյն թերթին տուած լուրը Սեպ. 24-ին: Ան կ'աւելցնէ որ ճիշդ է թէ շատ գնորդներ կամ դրամատան ընկերակիցներ ներկայացած են երկու տարիէ ի վեր, բայց կը շեշտէ «Մեր ընկերութիւնը ծախու չէ եւ ոչ մէկ բանակցութիւն կայ այդ առընչութեամբ»:

Անգամ մը եւս պատկերը փայլուն չէ եւ սրբան ալ չուղենք յոռետես ըլլալ, իրատեսութիւնն իսկ կըր բաւէ հաստատելու համար թէ ելք չի տեսնուիր բարելուումն: Սեպ. 27-ին եւ 28-ին կացութիւնը շատ աւելի վատթարացած էր ազերի յարձակումները սաստկացած եւ ծաւարատեսութիւնն իսկ կըր բաւէ հաստատելու որ Մարտակերտի շրջանի գիւղերու մեծ մասը ձեռքէ ելած է, կ'ըսուի նոյնիսկ թէ Ղարարազի 4500 քառակուսի քիլոմետրէն 2000-ը արդէն Ազերիներու գրաւման տակ է: Ազերիներու ներկայ ռազմավարութիւնը այն տպաւորութիւնը կը թողու որ կ'օգտուի հրադադարէն, ամբարպնդելու համար իր զինուորական գիրքը, որպէսզի զօրացած գիրքով ներկայանայ որեւէ նոր բանակցութեան:

Ինչպէս դրամ էինք մեր նախորդ թիւով, Սեպ. 27-ին հայկական ուժերը նահանջած էին եւ հեռացած Զլչերանէն, որ անցած էր Ազերիներու ձեռքը: Այս կռիւներու ընթացքին վեց հայ մարտիկներ մեռած են, թշնամին ունի 27 մեռեալ, փճացած են երեք հրասայլ: Նոյն օրը, շատ բուռն կռիւներ ծաւալած են Ասկերանի շրջանի Փառուխ գիւղը: Հոս ալ Հայերը ունին երեք մեռեալ (Ազերիները՝ երկու տասնեակ): Բուռն զնդակոծման ենթարկուած են Մարտակերտի շրջանի Վանք եւ Կիչան գիւղերը, իսկ Ազգամի շրջանէն ուժանոճուած են Ասկերան քաղաքը, Խանաբաղ, Փառուխ գիւղերը, Ֆիզուլիէն՝ Հազրութի շրջկեդրոնը, Տող գիւղը, Ինչպէս նաեւ Մարտունիի շրջանի Ճարտար գիւղը: Կան մեռեալներ, վիրաւորներ եւ մեծ վնասներ:

Սեպ. 28-ին ալ, ժամը 16-էն 17 ՍՈՒ 25 օդանաւով, Ազրբեջանցիները 500 քիլօ կշռող ռումբեր նետած են Հազրութի, Էգիլուի, Մեծ Թաղարի, Խանձաձորի վերայ, Ասկերանի շրջանի Աւետարանոց գիւղերու մօտ, նաեւ Ստեփանակերտի արուարձանները, կան մեծ վնասներ հոս ալ:

Ամբողջ օրը զնդակոծութիւնը չէ դադարած, արկերու հարուածներէն վնաս կըրած է Ղարարազի հնագոյն տաճարներէն, ԻԻՆԷՍՔՕ-ի հողատարութեան տակ գրտնուող Գանձասարի 14-րդ դարու եկեղեցին: Նոյն օրը, ժամը 17-ին յարձակումը սաստկացած է Մարտակերտի ամբողջ տարածքի վերայ:

Հրադադարի հռչակումէն ետք, յարձակումները ծաւալած են նաեւ սահմանակից մերձ գօտիները: Կապան մէկ մեռեալ կայ եւ 13 վիրաւոր, Կրասնոսելսկ՝ 3 մեռեալ եւ 5 վիրաւոր բնակչութեան մէջ: Գրնեւ 5 վիրաւոր են Գորիս, Կոռնիձոր, Խընդակոծուած են Գորիս, Կոռնիձոր, Խընդակոծուած է Կապան ուր մէկ մեռեալ կայ կոծուած է Կապան ուր մէկ մեռեալ կայ եւ երեք վիրաւոր: Վնասուած է քաղաքային հիւանդանոցի շէնքը:

### ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՔիթրՏԻՍՏԱՆԻ դեմոկրատ կուսակցութեան Պէռլին սպաննուած երեք զեկավարներու թաղումը կատարուեցաւ Փարիզ, Սեպ. 28-ին, Փէր - Լաչէգ: Յարգանքի աւարտողութիւն մը կազմակերպուած էր արուարձանի վաճառքի Քիւրտ Հիմնարկում: